

ՎԵՆԱՓԱՌ-ՆԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՆԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԲՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՆԱՍԱՏԱՌԹՅԱՆԸ

ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ ԱՌ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՆԱՍԱՏԱՌԹԻՒՆՆ, ՈՐ Ի ԲՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ, ԱՐԳԵՆՏԻՆԱ

Միրելի զաւակունք Առաքելական մեր Մայր Եկեղեցու ի Բուէնոս Այրես.

Գոհունակ սրբով փեղեկացանք, որ այս փարի լրանում է ՆԲԸ Միութեան Բուէնոս Այրեսի մասնաճիւղի Մարի Մանուկեան կրթական հաստատութեան հիմնադրման արծաթեայ յոբելեանը եւ այս առիթով յափուկ հանդիսութեամբ պիտի մեծարուն վարժարանի հիմնադիրները, առաջին փնօրէններն ու ուսուցիչները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր բարձր գնահատանքը, Նայրապետական օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհատրանքներն ենք բերում Մարի Մանուկեան կրթական հաստատութեան բոլոր երախտաւորներին, որոնց փեսիլքով, նիւթական ու հոգևոր աջակցութեամբ հիմնադրուել է ազգային կրթօջախը եւ քառորդ դար գնահատելի ծառայութիւն է մատուցում Արգենտինայում ապրող հաւաքաւոր հայորդիներին:

Միրելիներ. Ալեք եւ Մարի Մանուկեան անունները թանկ են ու հարազատ ինչպէս սփիւռքում, այնպէս եւ Նայրենիքում բնակուող բոլոր հայորդեաց սրտերին: Ապրուած կեանքով ու բարութեան գործերով երջանկայիշարակ բարեգործները բազմիցս հաւաստել են իրենց սէրն ու արարող հաւաքը առ ժողովուրդն հայոց, առ Նայրենին ու Մայր Եկեղեցին՝ արժանանալով համայն հայութեան երախտագէտ բարեմաղթանքներին:

Մեծահամբաւ բարերարների գործունէութիւնը սփիւռքում առաւելաբար միպրուած էր հայեցի սերունդ կրթելուն ու դաստիարակելուն՝ որպէս անխախտ գրաւական աշխարհասփիտ մեր ժողովրդի ազգային ինքնութեան պահպանութեան ու պայծառ գալիքի: Շնորհիւ Մանուկեան աստուածասէր ամուլի՝ մաշտոցեան գրին ու հայոց փառապանծ պատմութեանը հաղորդ են դարձել բազմաթիւ հայորդիք աշխարհի ջորս ծագերում:

Նանապազ աղօթք եւ օրհնութիւն նրանց լոյս անուններին:

Մարի Մանուկեան կրթական հաստատութեան երախտաւորներին յափուկ հանդիսութեամբ պատուելու մեծապէս գովելի նախաձեռնութիւնը պարփաւ արժանատւոյն շնորհելու օրինակելի աւանդոյթի սկզբնաւորումն է, քանզի վարժարանի կրթու-

թեան մշակների անմնացորդ ջանքերով մաքաղ հայորդեաց հոգիներում սերմանուած հայրենասիրութեան եւ եկեղեցասիրութեան բարի հունդերը աստուածային սիրոյ ու խնամքի մէջ պտղաբերել եւ շարունակ պտղաբերելու են ի շահ համօրէն մեր ազգի ու Եկեղեցու:

Արժանայիշարակ յոբելեանի առիթով Մեր սրբի ջերմ խօսքն ենք ուղղում նաեւ կրթական հաստատութեան սիրասուն սաներին, որպէսզի նրանք մշտապէս հաւատարիմ լինեն Մարի Մանուկեան Կրթական հաստատութեան սան լինելու բարձր պատուին՝ փարտած մեր սուրբ աւանդներին, Հայոց Եկեղեցուն, Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Հայրենի երկրին: Միրելի սաներ, հանապազ քաջեռանդ եղէք ուսման մէջ եւ «յամենայն ժամ բազմապարկէք զգիտելիս Ձեր»:

Առ Աստուած Մեր սրտաբոյխ աղօթքով նորանոր յոբելեաններ ենք մաղթում Մարի Մանուկեան կրթական հաստատութեանը, որպէսզի իր հայրենաշահ գործունէութեամբ եւ արձանագրած ձեռքբերումներով ուրախանալու բազում առիթներ պարգեւի արգենտինահայ համայնքին ու համայն մեր ժողովրդին:

Մեր պատգամն է Ձեզ ամենքիդ, որ շարունակէք ամենօրեայ հոգածութեամբ զօրացնել ու ծաղկեցնել Բուժնոս Այրեսի Մարի Մանուկեան կրթական հաստատութիւնը՝ ի խնդիր Արգենտինահայ զաւորի բարգաւաճման եւ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեան:

Թող Բարձրեալն Աստուած հաստատուն եւ շէն պահի Մարի Մանուկեան կրթական հաստատութիւնը եւ Իր օրհնութեան ներքոյ՝ նրա բոլոր նուիրեալներին ու սիրասուն սաներին:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ».
ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա Գիրս Օրհնութեան ի 29-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 129